

50. — Եթէ անոր կու տայ ցորենի կամ սեւ սամի ագարակ մը որ արդէն բաւական յառաջացած է մշակութեան մէջ, տէրը իրեն պիտի առնէ ագարակին մէջ եղած ցորենը կամ սեւ սամը և վաճառականին պիտի հատուցանէ (դրամ մով) դրամագլուխն և շահը:

51. — Եթէ դրամ չունի որ հատուցանէ, կրնայ վաճառականին սեւամ (կամ ցորեն) տալ թագաւորէն սահմանուած սակագինին համեմատ (tarif)՝ փոխարէն դրամին գոր վաճառականը տուած էր շահու համար:

52. — Եթէ վարձուորը չէ մշակած ցորեն կամ սեւամ, հաւասարապէս պարտական կը մնայ դաշնագրին գործադրութեան:

Համաւարապի օրինադրքին այս մասերը մեծապէս հետաքրքրական ըլլալով արդի տնտեսական հարցերուն նկատմամբ, ամբողջապէս գրեթէ, միայնակ յաջորդով քաղուածօրէն կը հրատարակենք: Ծ. Խ.

Հ. Բ. Ը. Մ.

Շ Ր Զ Ա. Բ Ե Ր Ա. Կ Ա. Ն Է Ն

(1) Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը ըստ կանոնագրի իր հրաժարականը տուած ըլլալով, Կեդր. Վարչ. Ժողովը իր վերջին նիստին մէջ ձեռնարկեց անոր վերանորոգումին, վերընորոգելով ցարդ պաշտօնի վրայ գտնուող եօթը անդամները և ընտրելով չորս նոր անդամներ եւս, ամէնքն ալ Գահիրէի մէջ առաջնակարգ դիրք գրաւող յարգուած և ազգասէր անձնաւորութիւններ:

Ըստ այնմ, ուրախ ենք յայտնելու թէ Գահիրէի Շրջանակային Յանձնաժողովը վերակազմուած է հետեւեալ կերպով. — Տեաքք Յ. Ամիրայեան, Ե. Եագըճեան, Տ. Հաճնեան, Ա. Հիւրմիւզ, Ժոզէֆ Մաթոսեան, Ա. Տրէնց Մարգարեան, Վահան Մուրատեան, Հ. Նասիպեան, Ճ. Զաքըր, Տօթթ. Պ. Սերովբեան և Լեւոն Քիրազեան:

Նախորդ Յանձնաժողովը Միութեան անգնա հատելի ծառայութիւններ մատուցած ըլլալով, այն օրէն ի վեր որ Կեդր. Վարչ. Ժողովը վերջնականապէս Բարիք փոխադրուեցաւ, անոր վերանորոգումը պատեհութիւն ընծայեց Կեդր. Ժողովին բարձրօրէն գնահատելու իր անդամներուն ցոյց տուած անդուլ անձնութիւնները և կատարած կարեւոր աշխատանքները:

(2) Միութեան համար Ընդհանուր Քննիչի մը պէտքը վերջերս մանաւանդ անհրաժեշտ նկատուած ըլլալով, Կեդր. Վարչ. Ժողովը իր վերջին նիստին մէջ ձեռնարկեց անոր վերանորոգումին, վերընորոգելով ցարդ պաշտօնի վրայ գտնուող եօթը անդամները և ընտրելով չորս նոր անդամներ եւս, ամէնքն ալ Գահիրէի մէջ առաջնակարգ դիրք գրաւող յարգուած և ազգասէր անձնաւորութիւններ:

տուած ըլլալով, Կեդր. Վարչ. Ժողովը առժամապէս այդ կարեւոր պաշտօնին կոչեց Տ. Մաքսիմ Ալեմյան, նախկին քննիչ Հանր. Պարտուց Վարչ. Ժողովէն և Ելմտական Նախարարութեան, որ չուրեք հայ կաթողիկ հասարակութեան մէջ ծանօթ և յարգուած դէմք մըն է և այժմ Բարիք կը բնակի:

Նորընտիր Ընդհ. Քննիչը փետրուարի վերջը կը մեկնի դէպի Եգիպտոս, ուր Շրջանակային Յանձնաժողովին հետ խորհրդակցելէ վերջ, պիտի ձեռնարկէ իր պաշտօնին սկսելով Պաղեստինէն և Սիրիայէն: Տ. Ալեմյան ոչ միայն պիտի քննէ Միութեան սեփական և նպաստընկալ Հաստատութեանց վիճակը, այլ և տեղւոյն վրայ պիտի զբաղի Միութեան բարեկեցութիւն և կազմակերպութեան խնդիրներով:

(3) Սելանիկէն Աթէնք գացած 120 որբերուն թշուառ վիճակը հաղորդուած ըլլալով Կեդր. Վարչութեան, հեռագրով 30,000 տրախմիի նըպաստ մը տրամադրուեցաւ Միութեան կողմէ: Քաղ. Շահվերտեան խոստացած է ատոնց մէջ կարեւոր մասը Հայաստան փոխադրել Մարտի սկիզբը:

(4) Առանց Միութեան գիտութեան, և, ինչպէս տնտեսուեցաւ, սխալմունքի մը հետեւանալով, նանսէնեան Օֆիսի Աթէնքի ներկայացուցիչ Մ. Քոթեկիքոֆի կողմէ 28 չքաւոր գաղթականներ վերջերս Սիրիա փոխադրուած ըլլալով, Միութեան Աթէնքի և Պէրլուի Մասնաժողովները տեսնելով անոնց թշուառ վիճակը, հարկադրուած են այդ խեղճերուն փոքր օգնութիւն մ'ընծաել: Այդ մասին Միութիւնը իր պատուիրակին միջոցաւ դիտողութիւն ըրած է ժընեւ:

(5) Հաճոյքով կ'արձանագրենք թէ Միութիւնը վերջապէս իր անդամիկ Մասնաճիւղը ունեցած է Պարսկաստանի մէջ, նախաձեռնութեամբ Մովսէս Խան Խաչատրեանի և աջակցութեամբ Տ. Գրիգոր Դիկահերի և Տ. Հայկ Գարագաշի: Թեհրանի Մասնաճիւղը յաջող պայմաններու մէջ կազմուած ըլլալով, արդէն ընտրած է իր դիւանը և որոշած է ուրիշ քաղաքներուն մէջ եւս Մասնաճիւղներ կազմել:

Միութեան նորագոյն Մասնաճիւղերուն մէջէն յիշենք նաեւ, Մուսուլէ վերջ, Մեքսիքոյի Մասնաճիւղը, որուն պիտի յաջորդէ Սան Բաօլոմէի Մասնաճիւղն ալ՝ նախաձեռնութեամբ Տեաքք Գիւր Միթիարեանի և Լ. Մոստիչեանի:

(6) Շնորհակալութեամբ ստացած ենք յօգուտ ներգաղթի 10,000 պելթ ֆր. Տ. Ե. Միսաքէ (Պրիւսէլ) և 3000 ֆրանս. ֆր. Տ. Թագուր Պալմըճեանէ (Նիս), իսկ 1000 ֆր. Զարեհ Պէյ Նուր պարէ, Աթէնքի չքաւոր ներգաղթողներուն համար:

Դիւան Ընդհ. Տնօրէնութեան

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ս Տ Ա Ց Ա Ծ Ե Ն Ք

ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻԿ, ՄԻԼԱՆՈՒ (Հր.) «Բացառիկ թիւ». Տպ. Վենետիկ - Ս. Ղազար. 1931: ՆԵԿՈՂՈՍԵԱՆ Յ. Գ. — Փերակ. Ընթերցարան հայ մանուկներու. «Կոչնակ» տպ. Նիւ Եօթ. 1929. էջ 91. գին 50 սէնթ: »
ՆԵԿՈՂՈՍԵԱՆ Յ. Գ. — Փերակ. Քերական-ընթերցարան. »
1931. էջ 43. գին 30 սէնթ: »
ԵՂ. ՀԱՅՊԵՏ. — Շիրինի Սիրտը. դերիշական գրոյց. (Մատենաշար «Վերածնունդ»ի). Թէհրան. տպ. «Փարոս». 1930. էջ 50. գին 3 դրան: »
ՊՈՍՏԵԼԵ Պ. — Մարքս-Լենինեան դաստիարակութեան հերթական խնդիրները. (Յաւելուած «Խորհրդային Հայաստան» օրաթերթի). Պետհրատ. Երևան. 1931: »
ԻՆԼԵԿՏ ժուռ «Ազատ ու անկախ Հայաստանը». (Յաւելուած «Երևան»ի). տպ. Պ. Էլէկեան. Պարիզ. 1930: »
ՄԻԲԱՅԷԼ ՎԱՐԱՆԳԵԱՆ. — Մուրառ (պատկերազարդ). տպ. «Հայրենիք». Պոսթըն. 1931. գին լաթակազմ Տօյար 2: »
ԵՐՈՒԱՆԻ Գ. ԱՂԱԹՕՆ. — Ոգտակար գիտելիքներ և գործնական խրատներ հայ երկրագործներուն. տպ. Միթիարեան. Վիէննա. 1931: »
Ս. ԹՈՒՄԱՃԱՆ. — Հայ Յեղափոխութիւնը պատմական տեսակէտէ. տպ. «Արեւ». Հ. Պոլիս, 1932. գին 10 դրուշ: »
Հայ Գաղութային Կեդրոն. Ծրագիր կանոնադիր. Պուլկուս - Այրես: »

Հր. «Սահակ-Մեսրոպ» տպագրատան. Գահիրէ. 1931-1932
Պատանին զրադարանը. թիւ 15-17

Բ. Շարք. թիւ 3.	— Հայաստան 2330 տարի առաջ. (Նկարագրութիւն Քսենոփոնէ) էջ 49-76
» 4.	— Էտիոպի. իր կեանքը և գիտելիքներ (շար.) » 1-24
» 5.	— » » » » » 25-53
» 6.	— Արշաւներ դէպ ի հիսիսային բեւեռ. Բիրի և Պըրա » 79-99
» 7.	— Պիգարո և Ինքայի գանձերը » 103-123
» 8.	— Ուղեւորութիւններ Ափրիկէի մէջ. Լիւիկնսթըն » 127-152
» 9.	— Հասան, ճնճուկ և խուլ Խաչիկ » 1-20
» 10.	— Հասան, ճնճուկ և խուլ Խաչիկ » 1-24
» 11.	— Վարդան փրկի կամ Երազի մը գինը » 1-24
» 12.	— Վահագ, Հայագրի արքունի գիտնադպիր » 1-40
» 13.	— Սասան ծոքր. » 34-64
» 14.	— Մանրացած կեղծամբ » 65-96
» 15.	— Գարբըր գլտորելով անիւն ստեղծեցին » 129-160
» 16.	— Առաջին ժամացոյցը » 161-192
» 17.	— Կրակի ուժը » »

Բաժանորդագրութիւն 12 թիւ 10 Ե. Գ.: Հատը ձեռքի 1 Ե. Գ.: Տպ. «Ս. Մ.» Գահիրէ. 1931. էջ 25

ՈՒՍԵԼ ՊԱՏՐԻԿ. — Ապրիլ 24ի Խորհուրդը » » 36
ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄԱՍԻՍ. — Նեղոսի գոհը (նորադէպ) » » 148
ԲԱՐԱԽԵԱՆ ՍՈՒՐԷՆ. — Հայաստանի լեռներուն աւանդութիւնները » » 12
Կարմիր Վարդան » » 232
Ծաղկաբաղ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Հարականներէն » » »

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԵՑԻՔ

“ԲԱԶՄԱՎԷՊ,”

ՀԱՆԴԵՍԻ

ՈՐ ԿԸ ԹԵՒԱԿՈՒՅ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ
ԻՆՆՍԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

1843 - 1932

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ՏՈՒԱՐ 3,50 ԿԱՆԻՍԿ

Դպրոցներու, տիւմբներու, որբանոցներու և ազգային բոլոր ընկերական հաստատութեանց համար ՎԷՍ ԳԻՆ՝
Ասիկէ գտտ ո' եւ է գեղջի համար հարկ է կանխապէս յարմարիլ խմբագրութեան հետ:
Թղթակցութիւն, բաժնեգին, յօդուած դրկել ուղղակի խմբագրութեան հասցէին:

